«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ

ՊԱՇՏՈՆԸ	Վարկային մասնագետ
ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ	Լրիվ աշխատաժամանակ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ	անորոշ ժամկետով
ՎԱՅՐԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ Ընկերության «Վարդենիս» մասնաճյուղի վարկային մասնագետի թափուր պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառույթները ներառում են պոտենցիալ վարկառուներ գտնելու աշխատանքների իրականացում, վարկերի տրամադրում, տրամադրված վարկերի վերադարձելիության ապահովում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ընկերության ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում,
- Հաճախորդների ներգրավում,
- Վարկատեսակների վաճառք,
- Վարկային գործի կազմում և վարում,
- Պոտենցիալ վարկառուի կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթի ամբողջականության ապահովում,
- Վարկային նախագծերի որակյալ փորձաքննության իրականացում՝ համաձայն Ընկերության ներքին իրավական ակտերի,
- Նոտարական գրասենյակում գրավի պայմանագրերի ձևակերպում /անհրաժեշտությունից ելնելով/,
- Վարկերի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացում,
- Վարկերի ընթացիկ մոնիթորինգի իրականացում,
- Վարկերի վերադարձելիությանն ուղղված գործընթացների իրականացում,
- Վարկերի պայմանների վերանայման, դատական կարգով բռնագանձման վարույթների հարուցման, վարկերի վերակառուցման կապակցությամբ իրեն վերապահված գործառույթների իրականացում
- Հաշվետվությունների կազմում և ներկայացում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- բարձրագույն կրթություն (ցանկալի է տնտեսագիտական կամ ֆինանսական),
- ֆինանսաբանկային ոլորտում աշխատանքային փորձը ցանկալի է,
- հանձնարարված առաջադրանքները ժամանակին և պատշաճ որակով կատարելու ունակություն,
- վերլուծելու ունակություն,
- կազմակերպելու և առաջնորդելու ունակություն,
- հաղորդակցման և բանակցություններ վարելու հմտություններ,
- թիմային աշխատանքի հմտություններ,
- լարված իրավիճակում լուծումներ գտնելու ունակություն:

ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- աշխատանքը ենթադրում է աշխատաժամանակի մինչև 80%-ը գրասենկայից դուրս աշխատելու պատրաստակամություն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս 1601, Հ.Անդրեասյան 6/4 կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ Anahit.Manukyan@kamurj.am՝ հստակ նշելով պաշտոնը, որին հավակնում են:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻԶԲԸ՝	11 ապրիլի 2024
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝	25 ապրիլի 2024